ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 հոկտեմբերի 2016 թվականի N 142-Ա

Գ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, *ինչպես նաև 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 01/21.2/4039-16 գրավոր ծանուցումը*՝ **կարգադրում եմ.**

1. ***Գրիշա Գինևանի Ղազարյանին*** 2016 թվականի հոկտեմբերի 24-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի Ա. Շիրակացու անվան N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2011 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված *N 3* աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կամ առաջարկված թեկնածուի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի Ա. Շիրակացու անվան N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Գրիշա Գինևանի Ղազարյանին***:

3. Առաջարկել դպրոցի խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի Ա. Շիրակացու անվան N 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 24
ք. Հրազդան